# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 24

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.-Ի ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Զառիթափ համայնքի ավագանու 2020թ-ի փետրվարի 21-ի թիվ 2 նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ավագանու 2020թ. թիվ 3 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Սարավան և Բարձրունի բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

3. Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 0,11 հա այլ հողատեսքը աճուրդով վաճառքի ներկայացնելու մասին:

4. Զառիթափ համայնքի 2020 թ. բյուջեի ծրագրային և ծախսերի տնտեսագիտական հոդվածների միջև վերաբաշխում կատարելու մասին:

5. «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները հաստատելու և համայնքային ներդրման չափ սահմանելու մասին:

6. Ձառիթափ համայնքի վարչական սահմաններում գտնվող 1,30256 հա արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Վիրաբ Սաղաթելյան
5. Գևորգ Գևորգյան
6. Գարիկ Գրիգորյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 25

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ և ԲԱՐՁՐՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով, ***ավագանին որոշում է՝***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է բնակավայրի վարչական տարածքում գտնվող ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3,10013 հա խոտհարքը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0307-0076/ և 3,10343 հա խոտհարքը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0307-0077/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 6,5215 հա արոտավայրը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0306-0024/, 4,83392 հա արոտավայրը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0305-0004/, 4,13322 հա

արոտավայրը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0306-0023/, 0,96869 հա վարելահողը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0306-0002/և 0,7905 հա վարելահողը /կադաստրային ծածկագիր՝ 10-039-0306-0003/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի Բարձրունի բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսված փոփոխությանը՝ ըստ որի նախատեսվում է բնակավայրի վարչական տարածքում գտնվող ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,025 հա բնակելի կառուցապատման հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-013-0003-0039/ փոխադրել ընդերքի և արդյունաբերության նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական:

4. ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Վիրաբ Սաղաթելյան
5. Գևորգ Գևորգյան
6. Գարիկ Գրիգորյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am,


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 26

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ 0,11 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 27.11.1998 թվականի թիվ 756 որոշմամբ հաստատված կարգով, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն

1. Զառիթափ համայնքի Սարավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող ծածկագիր՝ 10-039-0001-0013 0,11 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսքը ներկայացնել աճուրդով վաճառքի:

2. Աճուրդի համար մեկնարկային գին սահմանել հողատեսքի կադաստրային արժեքի 100 %-ը, քայլը՝ 10%-ը:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան

4. Վիրաբ Սաղաթելյան
5. Գևորգ Գևորգյան
6. Գարիկ Գրիգորյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 27- Ն

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով տնտեսական ճգնաժամի հետևանքով համայնքի բնակիչների դիմումները և ելնելով համայնքի գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով ընթացիկ ծախսերի իրականացման /գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերման/ անհրաժեշտությունից.

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, ***ավագանին որոշում է՝***

1. Բյուջետային ծախսերում կատարել 2310000 դրամի չափով նվազեցումներ, որից՝

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 1 խմբի 2 դասի տնտեսագիտական դասակարգման 4891 «- Պահուստային միջոցներ» հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 2310000 դրամով՝ սահմանելով 52690000 դրամ:

2. Բյուջետային ծախսերում կատարել 2310000 դրամի չափով ավելացումներ, որից՝

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 6 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4262 «- Գյուղատնտեսական ապրանքներ» հոդվածի տարեկան գումարն ավելացնել 2310000 դրամով՝ սահմանելով 2310000 դրամ:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Վիրաբ Սաղաթելյան
5. Գևորգ Գևորգյան
6. Գարիկ Գրիգորյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 28

### <<ՔԱՂԱՔԱՅՈՒ ԲՅՈՒՋԵ>> ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն Զառիթափի համայնքապետարանի և «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ միջև կնքված համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի, ***ավագանին որոշում է՝***

1. «Քաղաքացիների ձայնն ու գործունեությունը Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի «Քաղաքացու բյուջե» ենթադրամաշնորհի մրցույթի հայտադիմումների գնահատման արդյունքները և հաղթող նախագիծ հայտարարել Զառիթափ համայնքում ձևավորված աշխատանքային խմբի կողմից ներկայացված «Զառիթափ համայնքում ժամանակակից կանգառների կառուցում» ծրագրի նախագիծը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ենթադրամաշնորհի համար սահմանել համայնքային ներդրում՝ 3055 /երեք հազար հիսունհինգ/ եվրոյին համարժեք

ՀՀ դրամի չափով՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ տվյալ օրվա սահմանած փոխարժեքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Վիրաբ Սաղաթելյան
5. Գևորգ Գևորգյան
6. Գարիկ Գրիգորյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritap.vayotsdzor@mta.gov.am,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 29

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1,30256 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 20.10.2010 թ. թիվ 1477 որոշմամբ և հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 26.03.2020 թ. թիվ 01/15/1961-2020 դրական եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն՝

1. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1,30256 հա /ծածկագիր՝ 10-022-0291-0023/ արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու՝ 3 / երեք/ տարի ժամկետով:

Կողմ 5 դեմ 0 ձեռնպահ 0

1. Սմբատ Ասլանյան
2. Արգիշտի Բաբայան
3. Սասուն Վարդանյան
4. Վիրաբ Սաղաթելյան
5. Գևորգ Գևորգյան
6. Գարիկ Գրիգորյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**